

ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒՈՒԹՅՈՒՆ

ԱՆՆԱ ԱՄԻՐՅԱՆ

Երևանի պետական համալսարան

ՀԻՆ ԵՎ ՆՈՐ ԱՄԵՐԻԿԱՆ ՎԱՇԻՆԳՏՈՆ ԻՐՎԻՆԳԻ ՆՈՎԵԼՆԵՐՈՒՄ

Վաշինգտոն Իրվինգը եղել է Ամերիկյան հեղափոխության ժամանակակիցը: Նա իր գործերում արծարծում է Հին և Նոր (հետհեղափոխական) Ամերիկայի կյանքը՝ համեմատության մեջ դնելով այդ ժամանակների դրական և բացասական կողմերը: Հողվածում ներկայացված են երեք նովելներ՝ «Ռիպ Վան Վինկլի», «Բնկոտ հովտի մասին լեգենդը», «Գուֆի Հեյլիգեր»: Ամերիկայի անցյալը ներկայացնելիս հեղինակը խոսում է ջերմությամբ, իսկ երբեմն էլ՝ թեթև հումորով: Ներկայի մասին նա գրում սուր երգիծանքով: Այսպիսով, Նոր Աշխարհն, ըստ Իրվինգի, չափազանց գործունյա ու անհանգիստ է: Իսկ նահապետական Ամերիկայի մինչկապիտալիստական կյանքն ավելի սրտտիկ է ու գրավիչ:

Բանալի բառեր. *Ամերիկյան ռոմանտիզմ, Վաշինգտոն Իրվինգ, նովելի ժանր, ամերիկյան նովել, կախարդական քուն, լեգենդներ, ամերիկյան հեղափոխություն, երգիծանք, սնահավատություն*

Ամերիկյան ռոմանտիզմի հիմնադիր Վաշինգտոն Իրվինգը /1783-1859թթ./ Ամերիկայում տեղի ունեցող բուռն իրադարձությունների ժամանակակիցն է եղել: Անկախության համար մղվող պատերազմից հետո /1775-1783թթ./, որն ավարտվում է գաղութաբնակների հաղթանակով և նոր պետության՝ Ամերիկայի Միացյալ Նահանգների ձևավորմամբ, երկրում կազմավորվում և հաստատվում են բուրժուադեմոկրատական կարգեր: Սակայն արդեն իսկ հաղթանակած տարիներից լուրջ հակասություններ և կոնֆլիկտներ են առաջանում նորաստեղծ ժողովրդավարական երկրում: Հետպատերազմյա տարիներին Միացյալ Նահանգներում պահպանվում և նույնիսկ ավելի են ընդգծվում նյութական և սոցիալական շերտավորումները: Երկրի հոգևոր կյանքն իր տեղը զիջում է նյութականին:

Ամերիկայում հետհեղափոխական տեխնիկական և արդյունաբերական զարգացումները հետզհետե հիասթափության մեծ ալիք են բարձրացնում: Սա հիմք է դառնում Ամերիկայում ռոմանտիկ հայացքների ստեղծման: Այսպիսով, ամերիկյան գրականության մեջ կազմավորվում է ռոմանտիզմը, որում առանձնանում են երկու հիմնական փուլեր: Առաջին փուլը ռոմանտիզմի վաղ շրջանն է, որն ընդգրկում է 1820-1830-ական թվականները: Հենց այս փուլի հետ է կապված Վաշինգտոն Իրվինգի գրական գործունեությունը: Իրվինգն այն ամերիկյան գրողներից էր, ում ստեղծագործությունների շնորհիվ Միացյալ Նահանգների գրականությունը համաշխարհային ճանաչում ստացավ: Հենց Իրվինգի ստեղծագործություններով Ամերիկայում սկիզբ է առնում նովելի ժանրը, որն ազգային գրականության մեջ նույնչափ կարևոր դեր է կատարում, որքան որ վեպը:

Իրվինգի նովելներն ու պատմվածքներն, անկասկած, ունեն հեղինակին հատուկ գրական առանձնահատկություններ: Անիրականի համադրությունն իրականին ու առօրեականից սահուն անցումը հեքիաթայինին համարվում են Իրվինգի գրական առանձնահատկություններից թերևս ամենանշանակալիներից: Բացի այդ՝ Իրվինգն առաջին ամերիկյան գրողն էր, որն իր ստեղծագոր-

ծություններում ներառեց եվրոպական ռոմանտիզմին հատուկ ատրիբուտներ և միևնույն ժամանակ դրանք ենթարկեց ծաղրերգության:

Օրինակ՝ կախարդական քնի թեման, որն Իրվինգն օգտագործում է իր «Ռիպ Վան Վինկլը» /1819թ./ նովելում, իրականում շատ հին է: Այն հայտնի է դեռ հին հունական գրականությունից: Սյուժեն հետևյալն է. կեսօրվա տապից փրկվելու նպատակով հովիվ Էպիմենիդեսը քարանձավում քուն է մտնում և քնած մնում 57 տարի /Hansen, 2002: 397-399/: Նաև այս նույն հնարը հանդիպում ենք շատ հայտնի գերմանական ժողովրդական պատումներում, որտեղ կենդանի մնացած Ֆրիդրիխ Բարբարոսը քուն է մտնում քարանձավում մինչ այն պահը, երբ Գերմանիան կմիավորվի /James, 2001: 31/: Այս գեղարվեստական հնարը մինչ Իրվինգը գրեթե միշտ ունեցել է ողբերգական երանգավորում. հերոսն արթնանալով ընկնում է իր հեռավոր նախնիների մոտ կամ մահանում է միայնակ ու չհասկացված: Իրվինգի ստեղծագործության մեջ չկա դրամատիզմ: Ահա ևս մեկ ստեղծագործական առանձնահատկություն: Ըստ նովելի Ռիպը քնից արթնանալուց հետո վերադառնում է տուն՝ արդեն իսկ ազատված իր դժգոհող կնոջից և զբաղվում է այն ամենով, ինչն իրեն դուր է գալիս. «Ազատված տան պարտականություններից և հասած այն երջանիկ տարիքին, երբ մարդն անպատիժ տրվում է անգործությանը՝ Ռիպն իր հին տեղն է զբաղեցնում պանդոկի շեմին: Նրան մեծարում էին որպես գյուղի նահապետ և «մինչպատերազմյա ժամանակաշրջանի» կենդանի տարեգրություն» /Irving, 1848: 61/:

Տվյալ աշխատանքի նպատակն է ներկայացնել Վաշինգտոն Իրվինգի երեք նովելներ, որոնցում արտացոլվում է Հին /մինչ հեղափոխությունը/ և Նոր Ամերիկան: Ինչպես նաև համեմատության մեջ դնել հին և նոր ժամանակներին բնորոշ առանձնահատկությունները, բացահայտել, թե ի՞նչ ընդհանրություններ ունեն այս երեք նովելները: Եվ վերջապես, պարզել, թե հեղինակը ո՞ր Ամերիկային է տալիս իր նախապատվությունը և ինչպես է դա մեկնաբանում:

Վաշինգտոն Իրվինգի գրած այն նովելները, որոնք հիմնված են ամերիկյան նյութի վրա, իրենց ուրույն ու թարմ դիտարկումներով, հիանալի գրական լեզվով, սրամտությամբ և հումորով հիացրել են և՛ ամերիկացի, և՛ եվրոպացի ընթերցողներին: Առավել ուշագրավ են Ամերիկայի անցյալն ու ներկան միմյանց հակադրող «Ռիպ Վան Վինկլը», «Բնկոտ հովտի մասին լեգենդը» և «Դոլֆ Հեյլիգեր» պատմվածքները:

Առհասարակ, Իրվինգի «Ռիպ Վան Վինկլը» /1820թ./ համարվել է «առաջին և ամենահայտնի ամերիկյան նովելը»: Հեղինակը ծնվել է Ամերիկայի համար բեկումնային ժամանակահատվածում՝ 1783 թվին, երբ Փարիզում ստորագրվում է պայմանագիր, որը երկրում վերջ է դնում գաղութային կարգերին և ստեղծում անկախ պետություն: Լինելով այս իրադարձությունների ժամանակակիցը՝ գրողը կերտում է մի հերոսի, ով միացնում է այս ժամանակների բաժանումը կամ թռիչք կատարում մի ժամանակից մյուսը: Փաստորեն՝ Ռիպ Վան Վինկլը ժամանակի ճամփորդ է: Նա ճամփորդում է դեպի ապագա ոչ թե որևիցե բարդ սարքի միջոցով, ինչպես օրինակ՝ Հ.Ջ. Ուելսը կպատկերացներ ժամանակի մեքենան, այլ պարզազույն հնարքով՝ քուն մտնելով /Pollard-Gott, 2010: 50/:

Իրվինգի «Ռիպ Վան Վինկլը» անկասկած 19-րդ դարի ամենահայտնի և ամենախորհրդավոր պատմվածքներից է: Խորհրդավոր լինելու պատճառներից մեկը նախընտրելի անցյալի որոնումն է պատմվածքում, ինչպես և ամբողջ «Էս-

քիզների գրքում»։ Թվում է, թե ավանդական, միջնադարյան անգլիական մշակույթի փառաբանումը Էդմոնդ Բրուքի ոգով, Նյու Յորքում խաղաղ հոլանդական անցյալի իդեալականացումը և Հարազատ Ամերիկայի առասպելների կախարհանքը ոգեշնչել են ռոմանտիկ գրողի միտքը։ Գաղտնագերծելով բազում մշակույթային միջտեքստուալ կապեր /intertexts/՝ քննադատների մեծ մասը հավանաբար ուշադրություն չի դարձրել հետգրությանը, որ Իրվինգը թողել էր 1848 թվականին։ Անդրադառնալով պատմվածքին հետգաղութային ժամանակների տեսանկյունից՝ հետգրությունն ամբողջ պատմությունը ներկայացվում է հոլանդական և գերմանական լեզվաբան նյութերի վերափոխմամբ՝ այսպիսով նույնիսկ ներկայացնելով առասպելական և հեքիաթային հարթության վրա /Säckel & others, 2009: 103/:

Իրվինգը միշտ հիացել է Ամերիկայի փառահեղ բնությամբ։ Դրա վառ օրինակները շատ են, օրինակ՝ «Ռիպ Վան Վինկլ» նովելում հին Ամերիկայի բնանկարների նկարագրությունը. «...ինչ-որ տեղ՝ ներքևում, այնտեղ հեռու-հեռու վսեմ և լուռ իր ջրերն էր գլորում հզոր Հուդզոնը (միայն երբեմն դրա հայելանման գրկում կարելի էր նկատել ալ կարմիր ամպի կամ դանդաղող առագաստի, ասես տեղում քարացած առագաստանավի արտացոլանքը) բայց և հենց Հուդզոնն ինքն էլ կորում էր հեռավոր երկնագույն ստորոտում» /Irving, 1848: 49/։ Եվ ապա ինչ ենք մենք տեսնում հերոսի արթնանալուց հետո՝ ի հակադրություն հին Ամերիկայի հանգիստ ու հանդարտ բնանկարներին. «Ի գարմանս իրեն, սարերի վերևից թեթև շերտով գանգրահեր փրփուր բերող ջրերը ներքև էին հոսում՝ խփվելով մի ժայռից մյուսին և լցնելով հովիտը կարկաչյունով» /Irving, 1848: 54/։ Արդեն իսկ փոփոխված բնանկարը հանդիսանում է փոփոխությունների վկայություն, այն է՝ պարզությունից իրարանցումայինի։

Ռիպ վան Վինկլը Նոր Ամստերդամից ոչ հեռու գտնվող հոլանդացի նորաբնակների գյուղի բնակիչ է։ Ռիպի գլխավոր հատկանիշը «անհատափառելի ատելությունն էր արտադրողական աշխատանքի հանդեպ» /Irving, 1848: 45/։ Ալարկոտ Ռիպի դժկամ կինը նրան հուսահատության է հասցնում, և միակ բանը, որ նրան մնում էր ազատվելու ֆերմայի աշխատանքից և կնոջ դիտողություններից «ձեռքը վերցնել հրացանը և գնալ անտառներով դեզերելու» /Irving, 1848: 48/։ Հենց սրանով էլ զբաղվում էր Ռիպը իր օրվա մեծ մասը։ Եվ այդպես էլ մեկ օր Ռիպը գնում է անտառ և այնտեղ հանդիպում է «տարօրինակ արտաքինով մի անծանոթի», ով ուսին մի տակառ էր տանում։ Այդ անծանոթը մի ծերունի էր, ով ուներ խիտ մազեր ու սպիտակ մորուք և հագնված էր հին հոլանդական ոճով։ Ծերունին խնդրում է նրան իրեն օգնել, և Ռիպն անմիջապես արձագանքում է։ Տակառում կախարդական ըմպելիք է լինում, որը խմելով՝ Ռիպը քսան տարով քուն է մտնում, իսկ երբ արթնանում է, տեղյակ չի լինում, թե ինչ է իր հետ կատարվել։

Իրվինգն այստեղ հեզմանքով է վերաբերվում իր հերոսին՝ ներկայացնելով նրա ալարկոտությունը. «Ռիպը պատրաստակամ ձեռնամուխ էր լինում զբաղվել ուրիշների գործերով, բայց երբեք ոչ իր սեփականով։ Ընտանիքի հոր պարտականությունները ստանձնել և զբաղվել ֆերմայի գործերով նրա համար աներևակայելի և անհնարին էր թվում» /Irving, 1848: 45/։ Քնից արթնանալով՝ Ռիպը նախ և առաջ նկատում է, թե ինչպես է փոխվել բնությունը. փոքրիկ առվակը վերածվել էր աղմկոտ հոսքի, անտառն այլևս անանցանելի էր դարձել։ Գյուղի կերպարն էր անգամ փոխվել. «Գյուղը նույնպես փոփոխվել էր։ Այն

ընդարձակվել էր և դարձել ավելի մարդաշատ: Ռ-իայի առջև հայտնվում էին տներ, որոնք նա երբևէ չէր տեսել, մինչդեռ անհետ կորել էին նրան լավ ծանոթ հին տնակները: Օտար անուններ դռների վրա, օտար դեմքեր, ամեն բան օտար էր: Երբեմնի հանդարտության և հանգստության փոխարեն ամեն ինչում նկատվում էր զբաղվածություն, համառություն և սնափառություն» /Irving, 1848: 44-45./:

Ստեղծագործության սյուժեում Իրվինգը հակադրում է երկու ժամանակներ: Ընթերցողի առջև հայտնվում է անցյալի պատկերը, երբ դեռ Ռ-իայը քուն չէր մտել: Ապա ներկան՝ Ռ-իայի արթնանալուց հետո: Այսպիսով, բնապատկերների և մարդկանց միջոցով Իրվինգն ավելի տեսանելի է դարձնում Ամերիկայում տեղի ունեցած փոփոխությունները: Ժամանակին համընթաց փոփոխվում են թե՛ մարդիկ և թե՛ բնությունը՝ համապատասխանելով տվյալ շրջանի ավելի ռիթմիկ կյանքին: Այսպիսով՝ ըստ Իրվինգի պարզ է դառնում, որ այս փոփոխություններն ամենևին էլ դրական չէին:

Ռ-իայը շփոթվում է՝ հանգիստ գաղութային անցյալից հայտնվելով արդյունաբերական առաջընթաց ապրող ժամանակներում: Այստեղ ամեն բան փոխված է լինում. այլ են թե՛ մարդկանց ներանձնային հարաբերությունները և թե՛ նրանց հոգեբանությունը. «Թվում էր, թե՛ նույնիսկ մարդկանց բնավորությունն է փոխվել: Երբեմնի հանգստության և հանդարտության փոխարեն ամեն ինչում ի հայտ էր եկել ինքնավստահություն, զբաղվածություն, անհանգստություն» /Irving, 1848:56/: Այլ կերպ ասած՝ պակաս էական և օրիգինալ էին դարձել մարդկանց կերպարները: Դրանք կորցրել էր նահապետական հատկանիշները՝ հեռանալով վեհապանձ հանդարտությունից և շրջապատող գեղատեսիլ բնությունից:

Իհարկե գյուղի բնակիչները զարմանք են ապրում՝ տեսնելով ծեր նորեկին: Իսկ «ճարտասանը» ոչ թե հենց նորեկով էր հետաքրքրված, այլ իր ընտրության ձայնով: Նա, տեսնելով Ռ-իային, «անմիջապես նրան մի կողմ է տանում, որպեսզի ճշտի, թե ում օգտին է քվեարկելու» /Irving, 1848: 57/: Փաստորեն նրան առանձնապես չի հետաքրքրում, թե ինչու՞ էր այդ տարօրինակ մարդը հայտնվել և ո՞վ է, փոխարենը նա ցանկանում է ճշտել, թե նորեկը «ֆեդերալիստ էր, թե դեմոկրատ»: Ինչպե՞ս կարող էր նման ներկան դրական համարվել: Համեմատելով «նոր ամերիկացիների» կյանքը՝ լի ունայնությամբ, մանր ինտրիգներով ու իրարանցումներով, Ռ-իայի վերաբերմունքը հանդարտ ու խաղաղ կյանքի նկատմամբ շատ ավելի նախընտրելի է թվում: Այսպիսով, գործունյա և ունայն Նոր աշխարհն Իրվինգի աչքերում զուրկ էր պոետական հին կարգերից ու գրավչությունից:

«Աստիճանաբար Ռ-իայի կերպարը սկսեց ընդունվել որպես բանահյուսական կերպար, որը մարմնավորում էր նահապետական Ամերիկայի մինչկապիտալիստական շրջանը» /Irving, 1848: 61/: «Ռ-իա վան Վիկլ» նովելում, ինչպես և իր մյուս նովելներում, Իրվինգը հեզմանքով է խոսում սնահավատության մասին, Ռ-իայի քուն մտնելու մասին՝ ենթադրելով, որ նա խելագարվել է. «Երբեմն նույնիսկ կասկած է առաջանում Ռ-իայի պատմության վավերականության վերաբերյալ...» /Irving, 1848: 62/:

Իրվինգն իր նովելներում հակադրում է Ամերիկայում հողանրացի նորաբնակների հետնորդների նահապետական բարքերը անհետաքրքիր ու իրարանցող ժամանակակից կյանքին: Սրան որպես ապացույց կարող է նաև ծառայել Իրվինգի «Զնկոտ հովտի մասին լեգենդը» նովելի հետևյալ հատվածը, որտեղ

գրողը չի թաքցնում իր հիացմունքը «Զնկոտ հովտի» բարբերի ու սովորույթների հանդեպ և անչափ տպավորված է այն փաստով, որ գյուղի բնակիչները ապրում են նույն կյանքով, ինչպես որ ապրել են նրանց հայրերն ու պապերը: «Ես հիշատակում եմ այդ հանգիստ ու խաղաղ անկյունի մասին՝ ամեն կերպ գովաբանելով. այդ փոքրիկ մոռացված հողանդական դաշտավայրերում, որ տարածված է Նյու Յորք նահանգով մեկ: Ո՛չ բնակչությունը, ո՛չ բարբերը, ո՛չ էլ սովորույթները ոչ մի փոփոխության չեն ենթարկվում: Եվ եթե ես երբևիցե կարոտեմ մի այնպիսի ապաստան, որտեղ կկարողանամ թաքնվել առօրեական ունայնությունից և լռության մեջ անցկացնել մնացած օրերս, ապա ես դժվար թե գտնեմ մի վայր, որը կլինի ավելի օրինված քան այդ փոքրիկ դաշտավայրը» /Irving, 1848: 424/:

Ընդհանրապես, Վաշինգտոն Իրվինգի «Զնկոտ հովտի մասին լեզենդը» ենթարկվել է մի շարք տարբեր քննադատությունների: Չնայած, որ այդ բոլոր ուսումնասիրությունները բավարար տեղեկացված են տարբեր մակարդակներով, դրանք կարող են լինել ոչ ճշգրիտ այն առումով, թե իրականում ինչ է այն հաղորդում: Լոյդ Մ. Դայգրփոնթն իր «Իքսբորո Բրեյն. անփառունակ մարդն ամերիկյան գրականության մեջ» աշխատանքում բացատրում է, որ անցած քառորդ դարում այս պատմությունը Իրվինգագետների կողմից ընկալվել է որպես նկարագրություն քաղաքակրթության /կամ առաջընթացի/ և ամերիկյան բնակարաններում նոր Եդեմի հովվերգական երազանքի միջև առաջացած ընդհարում /Kaplan, 2000: 219/:

Ուշագրավ են «Զնկոտ հովտի» բնակիչների բնութագրական պատկերները, որոնց մասին Իրվինգը խոսում է թեթև հեզմանքով. «Շնորհիվ այստեղ տիրող խաղաղության ու հանգստության, ինչպես նաև բնակիչների բնավորության որոշ առանձնահատկությունների, ի դեպ հողանդացի նորաբնակների առաջին հետնորդների, այս մեկուսացած հովիտը վաղուց անվանվել է «Զնկոտ հովտ», իսկ տեղի երիտասարդներին շրջապատում կոչում են «Զնկոտ հովտի տղաներ»: Սի քնաբեր ու երազկոտ ազդեցություն ունի այս հովիտը տեղի մարդկանց վրա, որով պարուրվում է ողջ տարածքը» /Irving, 1848: 424/։ Այսպիսով, Զնկոտ հովտի բնակիչները ինքներն էլ քնկոտ են:

Օրինակելի տանտեր Բալթ վան Թասսելին Իրվինգը հետևյալ կերպ է բնութագրում. «Ծեր Բալթ վան Թասսելը կարող էր ծառայել որպես հաջողակ, ինքնագոհ, անվրդով ազարակատիրոջ օրինակելի կերպար: Նա, հազվադեպ, դա իրոք այդպես է, հանգիստ ու հանդարտ նայում էր իր ունեցվածքին... նա ոչ թե պարծենում էր, այլ իրեն բավարարված էր զգում իր հարստության շնորհիվ» /Irving, 1848: 433/։ Այսուհանդերձ Բալթ վան Թասսելին հեղինակը հեզմանքով է ներկայացնում: «Նրա հայացքներն ու մտքերը ոչ շատ հաճախ էին թնում անցնում իր կավածքներից դուրս, սակայն այդ սահմաններում ամեն ինչ հանդարտ էր ու հարմարավետ» /Irving, 1848: 433/։ Իրվինգը նույնիսկ հումորով է ներկայացնում վան Թասսելի սերն իր դստեր հանդեպ. «Բալթ վան Թասսելը ներողամիտ էր իր դստեր հանդեպ. նա սիրում էր դստերն ավելի, քան իր ծխամորճը, և ինչպես, որ վայել էր ողջամիտ մարդուն և հոյակապ հորը, ազատություն է ընձեռում նրան... » /Irving, 1848: 439/։

Բարեկեցությունը հովտի բնակիչներին չի դարձնում փառամոլ կամ նոր ժամանակների երկրպագու. իրենց նախնիների նման նրանք բարեհոգի են, հյուրընկալ, հյուրասեր ու ողջամիտ: «Զնկոտ հովտի» բնակիչների հետա-

քրքրությունները դուրս չեն գալիս այդ մեկուսացած գյուղից, որը թաքնված էր մի հեքիասային վայրում, այն է՝ Հուդգոնի ավերին:

Բնականաբար Իքաբոդ Քրեյնը՝ գյուղի ուսուցիչը, թվում է օտարական նման հանգիստ, չշտապող, ծանրակշիռ ազարակատերերի՝ հոլանդացիների հետնորդների շարքերում: Նա իր կերպարով մարմնավորում է մի պիոների, ով ցանկանում է կալվածքների տիրանալ, ասես այն մարդկանցից է, ովքեր գնում են դեպի Արևմուտք: Ի տարբերություն Ռիպի՝ ուսուցիչ Իքաբոդ Քրեյնը, բնակվելով այստեղ, ոչ թե անցյալից հայտնված նորեկ էր, այլ անհրապույր ապագայի արտացոլանքն ու մարմնացումը: Իրվինգի կերտած Իքաբոդի կերպարն ազահ էր: Նրա ազահությունն արտահայտվում էր ոչ միայն շատ գումար կուտակելու մոլուցքով, եսասիրությամբ ու համառությամբ, այլ նաև գյուղի բոլոր նյութական բարիքներին և լայնարձակ տարածքներին տեր դառնալու մեծ ցանկությամբ: «Մինչ Իքաբոդը դանդաղ վազում էր, նրա աչքերը միշտ լայն բացված էին այն ամեն վրա, ինչն անմիջական առնչություն ուներ համեղ ուտելիքի հետ, հիացմունքով կանգ էին առնում գեղատեսիլ աշնանն ի ցույց դրված զանձերի առջև: Ամեն կողմից երևում էին շատ մեծ քանակությամբ խնձորներ. դրանց մի մասը դեռ հաստարուն ծառերից բեռի նման կախված էին, մյուսները դասավորված էին զամբյուղների մեջ՝ շուկա տանելու համար: Այս երևում էին եզիպտացորենի լայնարձակ դաշտերը: Այս տեսարանը նրա աչքերում ծնում էր թիվածքների ու պուդինգների տեսիլքներ... » /Irving, 1848: 444/:

Այս ամենը Քրեյնի համար քայլ էր դեպի հարստացման: Նա գիտակցում է, թե որքան հեշտ կարելի է տիրանալ այդ ողջ հարստությանը՝ ամուսնանալով Վան Թեսսելի ժառանգի հետ: Իքաբոդի բնավորության ու էության մակերեսային լինելը բացահայտվում է նաև իր սնահավատության մեջ. «Կանայք նրա մեջ հարգում էին արտասովոր կարդացած մարդու, քանզի նա մանրամասն ընթերցել էր մի քանի գիրք, միայն թե հայտնի չէր, թե որ գրքերը և անգիր գիտեր Քոթթոն Մեթերի /Cotton Mather/ «Կախարդության պատմությունը Նոր Անգլիայում» գիրքը, որի անսխալական լինելուն նա հավատում էր իր ամբողջ հոգով» /Irving, 1848: 430/:

Քոթթոն Մեթերը /1663-1728թթ./ Մասաչուսեթս նահանգի պուրիտանիստ աստվածաբան է: Նա տասներկու տարեկանում ընդունվել է Հարվարդի համալսարան և եղել այնտեղի պատմության ամենաերիտասարդ ուսանողը: Համալսարանն ավարտելուց հետո զբաղվել է կրոնական գործունեությամբ: Չբավվել է նաև քաղաքականությամբ, հնդկացիների և սևամորթ ստրուկների մասին լուսաբանմամբ, նաև շատ է աշխատել երեխաների հետ: Համարվել է Մեյմեի կախարդների գործընթացի նախածեռնող /1692-1963թթ./: Մեթերն ունի բազմաթիվ աստվածաբանական, պատմական, փիլիսոփայական, բնագիտական աշխատանքներ: Նա մեծ դեր է խաղացել մասսայական պսիխոզի ուժգնացման ու տարածման գործում: Աշխատանքներ է տարել օբյեկտիվ իրականության մեջ կախարդների գոյության վերաբերյալ հետաքրքրությունն արթուն պահելու գործում /Silverman, 2001/:

Իրվինգը ծաղրում է Իքաբոդի և Քնկոտ հովտի բնակիչների սնահավատությունը: «Մեկ ուրիշ սարսափելի երևույթ, որից Իքաբոդը հատկապես հաճույք էր ստանում, հանդիսանում էին երկար ու ձիգ ձմեռային գիշերները, որոնք նա շատ էր սիրում անցկացնել հոլանդացի ծեր կանանց հետ: Նրանք նստում էին կրակի մոտ, մանում էին, վառարանում տաքանում էին խնձորները, իսկ նա լսում

էր ծեր կանանց պատմությունները հոգիների, ուրվականների, անմաքուր դաշտերի, անմաքուր կամուրջների, անմաքուր առվակների, և հատկապես Անգլոխ ձիավորի, կամ, ինչպես իրենք էին նրան մեծարում՝ Քնկոտ հովտի ցատկող հեսպիանի մասին: Իքսբորն իր հերթին հաճույք էր ստանում կախարդության, չարագուշակ նախանշանների և խորհրդավոր ձայների մասին պատմություններ լսելիս» /Irving, 1848: 431/: Ահա թերևս սա էր այն միակ դրվագը ամբողջ նովելում, որտեղ Իքսբորն ու Քնկոտ հովտի բնակիչները ներաշնակ էին գոյակցում: Այստեղ նույնպես հեղինակը ծաղրում է Իքսբորնին և հոլանդացի ծեր կանանց:

Իքսբորնի աշխարհընկալումը տգետ և վախկոտ մարդու աշխարհընկալում էր, ով ամեն ինչում տեսնում էր անպարտելի գերբնական ուժերի իշխանության առկայությունը, և ոչ բնության երևույթների ներդաշնակություն և օրինաչափություն: Մեթերի սարսափելի պատմություններն ուսումնասիրելիս Իքսբորն անչափ տպավորվում է. «Քանի անգամ էր նա կանգ առնում վախից կիսամեռ ձնածածկ թփի մոտ, որը նման էր ծածկված ուրվականի, որը փակում էր նրա ճանապարհը» /Irving, 1848: 432/:

Իրվինգն իր գլխավոր հերոսին՝ Իքսբորն Քրեյնին, ներկայացնում է երգիծանքով: Նույնիսկ անունն է հատուկ երգիծանքով ընտրված. Իքսբորն անունը հազվադեպ հանդիպող տղամարդու անուն է, որն ունի բիբլիական ծագում, և որը հին եբրայերենից թարգմանաբար նշանակում է «ձախորդ», «ղժբախտ»: Իսկ «Քրեյն» անգլերենով նշանակում է կռունկ, որին անչափ նման է հերոսի արտաքին տեսքը. «Իքսբորն Քրեյն անունը ճիշտ էր ընտրված հերոսի համար, քանի որ նա բարձրահասակ ու նիհար էր, ինչպես կռունկը: Նրա ուներ նեղ ուտերը, որոնք միացնում էին նրա երկու երկար ձեռքերը: Նրա գլուխը փոքր էր, իսկ վերևի մասը տափակ էր: Նա ուներ մեծ ականջներ, մեծ հայելանման կանաչ աչքեր և երկար քիթ» /Irving, 1848: 427/: Իքսբորնի վտարումը ուրվական ձիավորի կողմից նույնպես երգիծանքով է ներկայացված: Սրա մասին տարիներ անց պատմում է Նյու Յորք գնացող մի ծեր ագարակատեր, այն նույն մարդն, ով հեղինակին պատմել էր ուրվականների մասին պատմությունը՝ տարածելով այն լուրը, թե Իքսբորն Քրեյնը ողջ ու առողջ է, որ նա լքել էր այդ վայրերը, մասամբ ուրվականի և Հանս վան Ռեպիի հանդեպ ունեցած վախից և մասամբ էլ իրեն բաժին հասած վիրավորանքից: Չէ՞ որ նրան անսպասելիորեն լքել էր հարուստ ժառանգորդուհին: Իքսբորնը տեղափոխել էր երկրի հակառակ կողմը, այնտեղ դասավանդում էր, միաժամանակ իրավաբանություն էր ուսումնասիրում, դարձել էր քաղաքական գործիչ, ընտրվել էր որպես պատգամավոր, գրում էր թերթերում և, ի վերջո, դարձել հանրահայտ դատավոր /Irving, 1835/: Իրվինգը երգիծանքով է ներկայացնում Իքսբորնին, սակայն այդ երգիծանքը ստանում է ողբերգական երանգավորում: Իրվինգը ծիծաղելի է համարում այն փաստը, որ Իքսբորնի նման մարդիկ, այնուամենայնիվ, կարող են կյանքում մեծ հաջողությունների հասնել:

Այսպիսով, Իրվինգի կերտած ծաղրանկարի մմանվող Իքսբորն Քրեյնի արտաքին տեսքը, իրեն բնութագրող անունն ու ազգանունը և նրա կատարյալ վարքագիծ ունենալու անմիտ պահանջներն ամբողջականացնում են նոր ստեղծված Ամերիկայի անհոգի, դրա գիշատիչ, այլանդակ ու վանող լայն պատկերը: Այս պատկերն ամբողջությամբ հակադրվում է հանգիստ ու հանդարտ, բայց և հենց իր հանգստությամբ հիասքանչ հին Ամերիկային: Եվ բոլորովին պատահական չի Իրվինգը Իքսբորնին վտարում այսպես կոչված «դրախտային և

հեքիաթային վայրից», ինչպիսին որ հանդիսանում էր Քնկոտ հովիտը: Քրեյնը ընչաքաղց ու ազահ պորտաբույժ էր, ով ոչ մի կերպ չէր համապատասխանում Քնկոտ հովտի հանգիստ ու հանդարտ կյանքին: Այս ստեղծագործության մեջ Իրվինգն իրականացնում է իր երազանքը, այն է՝ փրկել գեղեցիկի մասունքները, որով, ըստ իրեն, պարուրված էր Ամերիկայի անցյալը: Քնկոտ հովիտը շարունակում է իր կյանքն, իսկ Իքաբոդ Քրեյնի մասին միայն մի նոր լեգենդ է մնում, ըստ որի նրան տանում է անգլուխ ձիավորը, իսկ հոգին շարունակում է ապրել դպրոցի շենքում:

Իրվինգին հատուկ է ահարկու սյուժեով նովելները ներկայացնել հումորով և երգիծանքով: Նույնպես էլ նա վարվում է «Քնկոտ հովտի մասին լեգենդը» գրելիս: Չէ՞ որ իրականում Իքաբոդին գերբնական ուժերը չէին տարել քնկոտ հովտից: Հեղինակը նովելի վերջում եզրակացություն է անում, որի մասին, նա իր հերթին իմացել էր ծեր ազարակատիրոջից: Հենց նա էլ պատմել էր «ուրվականների» մասին պատմությունը, նաև, որ Իքաբոդ Քրեյնը կենդանի էր և անհետացել էր ծեր Հանս վան Ռիպպելի հանդեպ տաժած վախի պատճառով, ումից ձի և ձիու թամբ էր պարտքով վերցրել: Ինչպես որ նովելի վերջում պարզ է դառնում, Իքաբոդն իրականում հանդիպել էր ոչ թե ուրվականի, այլ իր հակառակորդ Բրոմ Բոնսին, ով էլ նրան վտարել էր հովտից: Եվ ոչ թե ուրվական ձիավորն էր նրա վրա նետել իր գլուխը, այլ Բրոմն էր դրումով նրան հարվածել: Եվ, ի վերջո, այն, ինչ գտել էին միջադեպից հետո, վկայում էր իրական իրադարձությունների հետևանքների և ոչ գերբնական ուժերի առկայության մասին. «Ճանապարհին, որը տանում էր դեպի եկեղեցին, հայտնաբերվել էր Հանս վան Ռիպպելի կտորված և ցեխի մեջ թաթախված թամբը, կային ձիու սմբակների հետքեր. ձիերը հավանաբար սլացել էին խելագար արագությամբ: Հետքերը տանում էին դեպի այն վայրը, որ առվի հոսքն ավելի էր ընդլայնվում, իսկ ջուրն ավելի սև ու խորն էր դառնում: Այստեղ հայտնաբերվում է թշվառ Իքաբոդի գլխարկը, իսկ դրա կողքին կտոր-կտոր եղած դրոմը» /Irving, 1848: 458/:

Իրվինգը նովելին տալիս է յուրօրինակ կառույց: Նովելը սկսվում է նկարագրություններով, որ Քնկոտ հովիտը ցանկացած մարդու անուրջների գիրկն է գցում, և ավարտվում է երգիծական լեգենդ-ժաղերգությամբ:

Եվրոպական սարսափի մեխանիզմը պահպանված է Իրվինգի գործերում. հին տներում ուրվականներ, ուղիղ կեսգիշերին հայտնվող հոգիներ, որոնք խուլ հառաչում են, կենդանացող դիմանկարներ և այլն: Սակայն այս ամենում կա ծաղրերգություն, իսկ երբեմն նույնիսկ սուր երգիծանք:

Վաշինգտոն Իրվինգի «Դուլֆ Հեյլիգեր» (1822) ստեղծագործությունը նույնպես արժարժում է Ամերիկայի անցյալի և ներկայի խնդիրներն ու այդ ժամանակների հակադրումը միմյանց: Այստեղ պատմվում է այն մասին, թե ինչպես ուրվականը՝ Դուլֆ Հեյլիգերի նախնին, ցույց է տալիս գլխավոր հերոսին, թե որտեղ են թաքնված գանձերը: Այս նովելում Իրվինգը պատկերում է հնարամիտ և գործունյա մարդկանց, ի դեմս Դուլֆ Հեյլիգերի մոր, ով «ապրելով առևտրական քաղաքում՝ ինչ-որ չափով ներթափանցվել է այդ քաղաքում տիրող մթնոլորտ» /Irving, 1835: 449/: Տանտիրուհի Հեյլիգերը սկսում է վաճառել տարբեր տեսակի խմորեղեններ, հողանդական տիկնիկներ, մանվածքներ, մոմեր հենց իրենց տան պատուհանից՝ ի զարմանս ամբողջ փողոցի:

Այս նովելում Իրվինգը ծաղրում է տարբեր խավերի միջև եղած հարաբերությունները: «Չնայած, որ հարգարժան կնոջը վիճակվեց զգալ, թե ինչ է

կարիքը, այնուամենայնիվ նա պահպանել էր իր մեջ ընտանիքի հպարտության զգացումը. Չէ՞ որ նա սերվում էր Ամստերդամի վան դեր Շայդելներից: Նա խնամքով պահում էր տոհմական զինանշանը, որը շրջանակի մեջ էր և կախված էր բուխարու վերևում: Եվ, ճիշտն ասած, նա խորը հարգանքի էր արժանանում քաղաքի աղքատ բնակիչների կողմից» /Irving, 1835: 449/: Փաստորեն ոչինչ չէր մնացել Ամստերդամի վան դեր Շայդելների ցեղից բացի տոհմական զինանշանից և հետնորդների չքավոր ապրուստից: Այնուամենայնիվ, քաղաքի աղքատ բնակիչները հարգում էին տիկին Հեյլիգերին:

Կապիտալիզմի զարգացման տարիներին մարդը մարդու համար ոչ մի նշանակություն էլ չունեց: Որպես սրա ապացույց է հանդիսանում նովելի այն դրվագը, որտեղ Փիթեր դե Գրոուդթի մոտ միտք է ծագում Դոլֆին դարձնել գերմանացի բժիշկին աշակերտ՝ պալարախտից մահացած աշակերտի փոխարեն: Արդեն իսկ անհեթեթություն է. բժիշկի աշակերտը մահացել է պալարախտից: Փիթեր դե Գրոուդթը բացարձակ չի տխրում մահացածի համար, հակառակը՝ այժմ նա ուրախ է, որ կարող է օգտակար լինել տիկին Հեյլիգերին: Փիթերը ցանկանում է լինել օգտակար ոչ թե ընկերական օգնություն ցուցաբերելու համար, այլ որ միայն ազատվի Դոլֆից: «Փիտքը տիկին Հեյլիգերից ոչ պակաս էր մտահոգված այն հարցով, թե որտեղ տեղավորել Դոլֆին, քանզի նա տղայի մասին բավական տհաճ կերպով էր արտահայտվում և չէր կարծում, որ տղայից մի խելքին մոտ բան դուրս կգա» /Irving, 1835: 450/: Դե Գրոուդթը գիտեր, որ բժիշկն իր աշակերտների վրա տարբեր խառնուրդներով փորձարկումներ էր անում: Այդուհանդերձ նա գերադասում է նման խոսակցությունները համարել բանբասանքներ և այդ մասին չի հիշատակում տիկին Հեյլիգերի մոտ: Փիթերին չի հետաքրքրում Դոլֆը. այսպիսին է նրա բնավորությունը ու տեսակը:

Փիթեր դե Գրոուդթը գերեզմանափոր էր. որոշակի ազդեցություն ուներ բժիշկի վրա, քանի որ նրանք հաճախ էին միմյանց հետ գործով առնչվում: Իսկ բժիշկին հետևյալ կերպ է ներկայացնում Իրվինգը. «Թե կոնկրետ ո՞րտեղ էր սովորել բժիշկը, ի՞նչ ճանապարհով էր սովորել բժշկություն, որտեղ և երբ էր ստացել բժշկի դիպլոմ, այս հարցերին պատասխանելն այս պահին բավականին բարդ էր, քանզի նույնիսկ այն ժամանակ ոչ մի կենդանի էակ դրա ականատեսը չէր եղել...» /Irving, 1835: 450-451/: Բժիշկն օր օրի հարստանում էր, որովհետև բուժում էր այնպիսի անհայտ հիվանդություններ, ինչպիսիք գրքերում հնարավոր չէր գտնել: Նա մի քանի ծեր կանանց ու երիտասարդ աղջիկների բուժել է սարսափելի հիվանդությունից՝ կախարդանքից: Նման մտացածին ու անբացատրելի հիվանդություններից էր բժիշկը փրկում իր հիվանդներին: Այսպիսով, նա օգտագործում էր բոլոր հնարավորությունները ցանկացած գնով գումար աշխատելու:

Նովելի մյուս կերպարները նույնպես կոչված են ծաղրելու Ամերիկայի այն ժամանակները, երբ մարդիկ շահի ու գումարի համար պատրաստ էին զբաղվելու ցանկացած գործով: Ահա, թե ինչպիսին էր Նոր Ամերիկայի «գործունյա» մարդկանց գերնպատակն ըստ Իրվինգի:

Լինելով բանականության կողմնակից՝ Իրվինգն իր ստեղծագործություններում ծաղրում է սնահավատներին, ուրվականներին: Նա չի հավատում գերբնական ուժերին, ինչն էլ արտահայտվում է իր գործերում. գերբնականը ներկայացվում է առօրեականի ու սովորականի միջոցով, նույնիսկ ի միջի այլոց, ասես պատահաբար: Իրվինգը ծաղրում է Ամերիկայի թե՛ անցյալը և թե՛ ներկան:

Սակայն ծաղրելիս անցյալը նա ավելի մեղմ ու բարի է՝ սահմանափակվելով թեթև հումորով, իսկ ներկան ներկայացնում է սուր երջիծանքով:

Իրվինգի «Ամերիկյան» նովելները բազմազան թեմաներ են արծարծում: Օրինակ՝ «Ռիպ Վան Վինկլ» նովելում շեշտը դրվում է կործանարար ժամանակի վրա: Ռիպը հենց այդ սարսափելի արագընթաց կյանքի և մարդկային փխրունության ապացույցն է: Հեղինակը մեկ օրում է գրել ստեղծագործությունը՝ ներդնելով այն ամենն, ինչ գիտեր մարդկային արարածի մշտական թշնամու՝ ժամանակի մասին: Նա հակադրել է անցյալն ու ներկան: Ծաղրել է գաղութային Ամերիկան, սակայն միևնույն ժամանակ գերադասել նման անցյալը և ոչ թե ժամանակակից ու առաջադեմ Միացյալ Նահանգները:

Իրվինգն իր այս նովելներում համեմատում է անցյալն ու ներկան մեկ բաց հակադրությամբ, մեկ էլ թափանցիկ ակնարկներով ու կամ ոչ բացահայտ համեմատություններով:

Այսպիսով՝ Իրվինգի վերը նշված ստեղծագործություններն ընթերցելիս պարզ է դառնում հենց գրողի կարծիքն ու տեսակետը: Նոր աշխարհն, ըստ նրա, չափազանց գործունյա ու անհանգիստ է, վազում է հեշտ տրվող ապրուստի հետևից: Մարդկային հարաբերություններում հոգևոր արժեքներն իրենց տեղը զիջում են հաշվենկատությանն ու ունայնությանը: Այն ամենն ինչ էլ չի գրավում Իրվինգին: Իսկ նահապետական Ամերիկայի մինչկապիտալիստական կյանքը հանդիսանում է որպես երևակայական աշխարհ, որն ավելի պոետիկ է ու գրավիչ և որի կողմնակիցն է Վաշինգտոն Իրվինգը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Hansen W.F. Ariadne's Thread: A Guide to International Tales Found in Classical Literature. USA: Cornell University Press, 2002.
2. Irving W. The Complete Works of Washington Irving in One Volume with a Memoir of the Author / Schmerler M. S. (ed.), Germany: Frankfort on the Main, 1835.
3. Irving W. The Works of Washington Irving. New Edition. Revised. The Sketch Book. New York: George Putman, 1848.
4. James P. The Murderous Paradise: German Nationalism and the Holocaust. USA: Greenwood Publishing Group, 2001.
5. Kaplan C. Critical Synoptics: Menippean Satire and the Analysis of Intellectual Mythology. USA: Fairleigh Dickinson Univ. Press, 2000.
6. Polla d-Gott L. The Fictional 100: Ranking the Most Influential Characters in World Literature and Legend. USA: iUniverse, 2010.
7. Säckel S., Göbel W., Hamdy N. Semiotic Encounters: Text, Image and Transnation. New York, Amsterdam: New York Publishing, 2009.
8. Silverman K. The Life and Times of Cotton Mather. New York: Welcome Rain Publishers, 2001.

А. АМИРЯН – *Старая и Новая Америка в новеллах Вашингтона Ирвинга.* – Вашингтон Ирвинг был современником Американской революции. В своих произведениях Ирвинг затрагивает жизнь Старой и Новой Америки, сравнивая положительные и отрицательные стороны этих времен. В статье представлены три новеллы: “Рип Ван Винкль”, “Легенда о сонной лощине” и “Дольф Хейлигер”. Представляя прошлое, автор выражается с теплотой, а иногда и с легкой иронией, а

о настоящем пишет с острым сарказмом. Следовательно, Новый Свет, по Ирвингу, чрезвычайно деловитый и беспокойный, а дореволюционная жизнь патриархальной Америки более привлекательна и поэтична.

Ключевые слова: Американский романтизм, Вашингтон Ирвинг, жанр новеллы, волшебный сон, легенды, Американская революция, сатира, суеверие

A. AMIRYAN – *Old and New America in Washington Irving’s short stories.* – Washington Irving was a contemporary of the American Revolution. In his works he touches upon Old and New (post-revolutionary) America, comparing the positive and negative sides of these periods. In the paper three short stories are presented: “Rip Van Winkle”, “The Legend of Sleepy Hollow” and “Dolph Heyliger”. Here the author depicts America’s Past warmly, and sometimes with slight irony. But he uses sharp satire writing about the contemporary America. Thus, the New World, according to Irving, is too active and restless. And the patriarchal Post-Capitalist America is more poetic and attractive.

Key words: American Romanticism, Washington Irving, the genre of the novel-la/short story, American short story, magic sleep, American Revolution, satire, superstition